սրանց «անուններում ուղում է» վերագտնել Փարանդիոն եւ Բող բերդերի յիշատակը:

Սակայն, պ. Խաչատրեան, որպէս հայոց լեզուի հնամեայ ուսուցիչ, պիտի գիտենայ, որ Հ. Սարգսեանի դրչի Բարդողոս եւ Բուլուլ կարդալու է Պարտողոս եւ Պուլուլ: Արդ, ի՞նչ խալիֆայական լեզուագիտութիւն է հարկաւոր, որ նմանութիւն տեսնէ այս եւ Փարանդիոն ու Բող անունների մէջ:

Այսպիսով բանաւոր հիմք չկայ Բողբերդը եւ ոչ էլ Փարանդիոնը տեղահան անել եւ քաշել Թորթումի հովիտը, մէկը՝ Բասենից, միւսը՝ Սպերի մօտերքից:

Այս սխալն արուած է երկու մոլար ենթադրութեամբ: Իբրեւ թէ Բող եւ Փարանդիոն միշտ «անբաժան» են յիշւում, ուստի պէտք է որ իրար հարեւան լինէին: Երկու վայրերը անբաժան են քաղաքական բախտով, բայց ոչ աշխարհագրապէս:

Պրոկոպը, տեսանք որ, նրանց տեղադրութիւնը տալիս է անջատ եւ միմեանց հետ չէ շփոթում: Ինչ վերաբերում է քաղաքական բախտին, ոչ միայն նրանք իրար հետ էին կապուած, այլ եւ Լազիկէի զոյգ բերդերին՝ Շարապան եւ Սկանդա, որ իրարից եւ հայ վայրերից հեռու էին:

Միւս թիւր ենթադրութիւն է, որ Սպեր հոռոմներին էր պատկանում, ուստի Փարանդիոն չէր կարող այնտեղ լինել, որովհետեւ սա պարսից բաժնումն էր:

Թւում է, թէ Սպեր ասելով պ. Խաչատրեան միշտ հասկանում է Սպեր քաղաքը: Մինչդեռ խօսքը մի դէպքում գաւառի մասին է, միւս դէպքում քաղաքի շրջակայքի: Գիտենք, որ Սպեր գաւառը պատկանում էր հոռոմներին: Խորենացին չհաշուած (Գ. 43), մեր գիտութեան միակ աղբիւրը Պրոկոպն է, նրա այն վկայութիւնը, թէ Ճորոխի հովիտը երեքօեայ ճանապարհ արեւմուտքից դէպի արեւելք հոռոմական հող էր: Բայց եօրեայ ուղին մինչեւ ո՞ւր էր հասնում, յայտնի չէ:

Մենք հաւանական ենք համարել, որ հոռոմ-պարսիկ սահմանագիծը ծառայել է հիմ եւ սահման Տայոց աշխարհի եւ Բարձր Հայքի: Եւ որովհետեւ Սպերը մտնում է Բարձր Հայքի մէջ, ուրեմն պատկանում էր հոռոմներին:

Միւս կողմից՝ Տայքի մէջ էր Արսեացփոր «առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Ցոհ գալով ի Սպերայ»: Որով Սպերի եւ Տայքի սահմանագիծը ընկնում է մօտաւորապէս Սպեր քաղաքի մօտերքը: Այս քաղաքը յայտնի չէր հնում, արդեօք Սմբատաւա՞ն է, որը Վարդանը նոյնացնում է սխալմամբ Բաբերդի հետ:

Այսպիսի պայմաններում ոչ թէ Սպեր քաղաքն է, որ պիտի լուծէ հոռոմ-պարսիկ սահմանագծի խնդիրը, եւ սրա հետեւանքով որոշէ Փարանդիոնի դիրքը, այլ ընդհակառակը: Փարանդիոնի տեղադրութիւնը այնքան որոշ է Պրոկոպի մօտ, որ սա պիտի հիմն ծառայի սահմանագիծը ճշդելու Սպերի շուրջը:

Խաչատրեան այնքան վստահ է իր դիտութեան, մասնաւորապէս Սպերի վերաբերեալ, որ պէտք չէ զղում քննութեան եւ զլանում է անգամ պարզել իր դիտութեան աղբիւրները:

Ցիշելու է նաեւ, որ Փարանդիոն գտնւում էր ուղիղ սահմանակից լեռներում եւ ոչ թէ պարսկական հողի վրայ: Պ. Խաչատրեանին անծանօթ են մնացել երկու ուրիշ յոյն պատմիչներ՝ Մալալա եւ Թէոփան, որ կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում ոսկեհանքի մասին եւ լրացնում Պրոկոպին: Սրանց տեղեկութիւնը բերուած է մեր գրքում, (տ. էջ 198 Հայաստան Յուստինիանի դարում), որ սպրտել է, թերեւս, մեր քննադատի ուշադրութիւնից:

Մալալա պատմում է, որ ոսկեհանքը գտնւում էր պարսկական սահմանի լեռներում, որ անձրեւի եւ հեղեղի ժամանակ հողը իջնում էր եւ մերկանում ոսկու աւազը: Հանքը տալիս էր տարեկան երկու հարիւր լիտր ոսկի: Մալալա հաւատացնում է, որ Անաստաս կայսեր ժամանակ ոսկեհանքի լեռները անցան կայսրութեան, եւ սա էր միայն վայելում հանքերի հարստութիւնը, մինչդեռ յառաջ պարսիկները եւ հոռոմները միասին կապալով էին տալիս մասնաւոր անձանց: Ասել է, թէ եկամուտը բաժանում:

Ոսկեհանքը հոռոմները գրաւեցին 527 թուին եւ պահեցին մինչեւ 532: Պատմիչը չփոթել է գրաւման ժամանակը: Բայց իրողութիւնը մնում է իր ոյժին մէջ, որ մինչեւ գրաւումը ոսկեհանքից օգտւում էին երկու պետութիւնները:

Թէոփանը հաստատում է Մալալայի խօսքերը, ասելով, որ առաջին ժամանակները